ՈՐՈՇՈՒՄ

Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով ձևավորելու մասին

Երևան, 29 Հոկտեմբեր, 2017թ.

Հարգելի՛ հայրենակիցներ

Հիշեցնենք որ.

Արևմտյան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արևմտյան Հայաստանի Կառավարությունը և Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը), որոնք ստանձնած են Արևմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգերի կազմավորումն ու ստեղծումը հայերի գոյության եւ ինքնության պահպանումը, և Արևմտյան Հայաստանի տնտեսության վերականգնումն ու վերաշինության պատասխանատվությունները,

Կը որոշեն.

Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) երկրորդ գումարման, խորհրդարանական ընտրությունները իրականացնելու նպատակով.

- Ստեղծել հատուկ Կենտրոնական Ընտրական հանձնաժողով (ԿԸՅ),

Առաջնորդվելով՝

ա) Արևմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի պաշտոնական հայտարարության (ընդունված՝ 2004 թ. Դեկտեմբերի 17-ին) եւ «Արևմտյան Հայաստանի Հանրապետության հայերի իրավունքների մասին» հռչակագրի (ընդունված՝ 2007 թ. Հունվարի 20-ի) դրույթներով:

բ) Արևմտյան Հայաստանի Հանրապետության հայերի ընտրական օրենսգիրքով (ընդունված՝ 24 Նոյեմբերի 2007-ին):

գ) Արևմտյան Հայաստանի Հանրապետության կառավարության ստեղծման հռչակագրով (ընդունված՝ 2011 թվականի Փետրվարի 4-ին), և Արևմտյան Հայաստանի պետական համակարգի մասին որոշումներով (ընդունված՝ 2011 թ. Մարտի 2-ին):

դ) 2012 թ. Նոյեմբերի 30-ի Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով (Խորհրդարան) ձևավորելու մասին 5-րդ վեհաժողովի որոշումներով:

ե) Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձևավորելու մասին 2013 թ. Մայիսի 24-ի, Հռչակագիրի որոշումամբ:

զ) Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով (Խորհրդարան) ձևավորող առաջին Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի 2013 թ. Դեկտեմբերի 16, Որոշման բովանդակությամբ:

է) Արևմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, (ընդունված՝ 2016 թ. Մայիսի 9-ին) :

Կը որոշեն նաև՝

որ՝ Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) իրավասությունը, Նկատի առնելով այն փաստը, որ հակառակ մարդկային բարոյականության և ցանկացած իրավունքի՝ ճանաչելու Հայոց իրավունքները բնօրրան հայրենիքի նկատմամբ, Թուրքիայի երեք իրարհաջորդ կառավարություններ՝ սուլթանական, երիտթուրքական և քեմալական, 1894-1923 թթ. իրականացրել են Հայերի ցեղասպանություն և բռնագաղթ, որի միջոցով աննախադէպ փոփոխվել են ազգագրական պատկերը տարածաշրջանում, իսկ հետևանքում կրճատելով հայերի թիվը բռնազավթված տարածքներում, որպէս «հավելավճար» իրենց հանցագործությունների՝, խախտել են 2 ազգությունների միջև բնականոն հարաբերակցությունը՝ Արևմտյան Հայաստանուի Հանրապետությունում:

Եւ նկատի առնելով վերոհիշյալ ողջ իրողությունը,

կը տարածվի ինչպէս Արևմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այնպեսել Արևմտյան Հայաստանի Հանրապետության բռնագրավված երկրամասի՝ Արևմտեան Հայաստանի Հանրապետության փաստական (*de facto*) և իրավական (*de jure*) տարածքների վրա՝

նկատի ունենալով

ա) Հայաստան - Թուրքիա սահմանազատումը՝ համաձայն ԱՄՆ-ի 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի (, 1920 թ. Նոյեմբերի 22-ին):

բ) Պատմական Հայաստանի, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի անկախությունը՝ համաձայն ՄԱԿ-ի՝ «Գաղութային երկրների և ժողովուրդների անհապաղ անկախություն տրամադրելու մասին» հռչակագրի (1960թ. Դեկտեմբերի 14-ին):

գ) Որպէս բնիկ ժողովուրդ՝ Արևմտյան Հայաստանի հայերի ունեցած պատմական, ծագումնաբանական, մշակույթային, քաղաքակրթական, պետականաստեղծ անժամկետ և անժխտելի իրավունքները՝ համաձայն ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրի (13 Սեպտեմբերի, 2007 թ.):

Վերոհիշեալ իրավասությունը կտարածվի Արևմտյան Հայաստանի հետևյալ նահանգների և տարածքների վրա՝

1. Վան,

2. Բիթլիս,

3. Կարին (Էրզրում),

4. Համշեն (Տրապիզոն),

5. Սեբաստիա (Սիվաս),

6. Տիգրանակերտ (Դիարբեքիր),

7. Խարբերդ (Խարփութ),

8. Կարս (և Սուրմալու),

9. Ջավախք,

10. Նախիջևան:

11. Կիլիկիա (այդ թվում՝ Կեսարիա, Մարաշ, Ադանայ, Զեյթուն, Այնթափ, Անտիոք),

Առաջնորդվելով վերը նշված փաստաթղթերով և դրույթներով՝ Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային Խորհուրդը, Արևմտյան Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը (Խորհրդարանը) ձևավորող հատուկ հանձնաժողովը:

Կը Հայտարարեն, որ՝

Կստեղծվի Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) **Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով (ԿԸՅ**), որը լիազօրված է կազմակերպելու և անցկացնելու ընտրական ողջ գործընթացը:

(Տե՛ս Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքը՝ http://www.western-armenia.eu/WAP/index.htm:

Քաղաքացիների գրանցումը

Արևմտյան Հայաստանի Հանրապետության (Հայրենիքի) քաղաքացիներ կարող են լինել բոլոր այն անձինք, ովքեր կարող են հիմնավորել թե՛ իրենց տարագրյալ լինելը Հայրենիքից (Արևմտյան Հայաստանից), թե՛ իրենց ծագումը՝ նույնիսկ մի քանի սերունդ վաղեմությամբ (ուղիղ ժառանգական կապով):

ա) Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած Արևմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպէս նաև հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների և միությունների գրանցման գործընթացը կ'իրականացվի՝ 2018 թ. Մայիսի 24-ից մինչև նոյեմբերի 30-ը:

բ) Ընտրութիյուներին մասնակցելու ցանկութուն հայտնած Արևմտյան Հայաստանի քաղաքացիները կը գրանցվեն հետևյալ կայքով՝

http://www.western-armenia.eu/WAP/Petition/Enregistrement-fr-arm.php

http://www.western-armenia.eu/WAP/Petition/Registration-en-ru.php

http://www.western-armenia.eu/WAP/Petition/Kayit-arab-turc.php

http://www.western-armenia.eu/WAP/Petition/Engrafi-grec-de.php

Թեկնածուների գրանցումը

գ) **2018 թ. Փետրուարի 1-ից** կը սկսվի Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության, թեկնածուների կողմից իրականացվող ստորագրահավաքը՝ հատուկ հաստատված ձևաթղթերի միջոցով:

դ) Թեկնածուն պէտք է ներկայացնի ինքնակենսագրություն, գործունեության համառոտ ծրագիր և իր վերապատրաստման վկայականը:

ե) Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը (Խորհրդարանը) բաղկացած է Արևմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից:

Արևմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ունենալը պարտադիր է պատգամավորության թեկնածուի համար:

զ) Առաջադրվելու համար թեկնածուն պէտք է ներկայացնի Արևմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նվազագույնը 200 ստորագրություն:

http://www.western-armenia.eu/WAP/Candidat/Enregistrement-fr-arm.php

http://www.western-armenia.eu/WAP/Candidat/Registration-en-ru.php

http://www.western-armenia.eu/WAP/Candidat/Kayit-arab-turc.php

http://www.western-armenia.eu/WAP/Candidat/Engrafi-grec-de.php

է) Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուները կը գրանցվեն հետևեալ կայքում՝

http://www.western-armenia.eu/WAP/index.htm

ը) Թեկնածուների գրանցումն իրականացվում է 2018 թ. Հոկտեմբերի 1-ից ժամը 08:00, մինչև Հոկտեմբերի 22-ը՝ ժամը 24:00:

թ) Ընտրությունները կանցկացվեն 2018 թ. Նոյեմբերի 22-ից ժամը 08:00, մինչև Նոյեմբերի 30-ը՝ ժամը 00:00 (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի միջոցով կամ գրավոր):

ժ) Ընտրութիւների արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կհաստատվեն 2018թ. Դեկտեմբերի 8-ին և կհրապարակվեն Ներքին Գործերի Նախարարության կողմից, Նախագահի հրամանով:

Հաստատում են, որ՝

Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուները, որոնք պաշտենապէս ընդունում են Արևմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի և Արևմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության հռչակագիրը, հիմնադիր փաստաթղթերը և Արևմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, կարող են ինքնաառաջադրվել կամ ներկայացվել հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպություններին եւ միություններին, Արևմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի ու Արևմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից:

Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձևավորման հիմնական մեխանիզմները, այդ թվում՝ կանոնակարգը, որով հաստատվում է Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) առաջին նստաշրջանի գումարման ժամկետը, պատգամավորների քանակը, հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպութիւների և միութիւների ներգրավման օրինակարգը՝ հաստատված Արևմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի կողմից:

Կոչ ենք անում համայն հայությանը՝

Պաշտպանելու ու հաստատելու իր անսակարկելի և անժամանցելի իրավունքները, որի կարևորագույն գործողություններից մեկը Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրություններն են, և ակտվօրեն մասնակցելու այս ընտրություններին՝

Արևմտյան Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու և դրա ընձեռնած բացառիկ հնարավորության շրջանակներում:

Արևմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ՝
Արմենակ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Արևմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության Վարչապետ՝
Գառնիկ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Արևմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ՝
Աղվան ՏՈՆԱԿԱՆԵԱՆ